

2014թ. առաջին եռամսյակի խոշոր հարկ վճարողների ՀՏ մոնիտորինգի ամփոփ  
ցուցանիշների վերլուծություն

Սույն վերլուծությունը իրականացվում է այն 515 հարկ վճարողների ամփոփ  
ցուցանիշների հիման վրա, որոնք ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանով ընդգրկված  
են խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության կողմից 2014թ.-ի ընթացքում  
սպասարկվող հարկ վճարողների ցանկում:

Խոշոր հարկ վճարողների մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների  
համեմատական վերլուծությունը իրականացվում է նույն 515 հարկ վճարողների 2013  
և 2014 թվականների փաստացի տվյալների հիման վրա:

2014թ. առաջին եռամսյակի ամփոփ ցուցանիշների վերլուծության հիման վրա  
կարելի է փաստել, որ

1. Իրացումից հասույթը կազմել է 819.4 մլրդ դրամ կամ նախորդ տարվա նույն  
եռամսյակի համեմատությամբ աճել է 9.6 %-ով:
2. Ներմուծման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի  
համեմատությամբ նվազել են 2,8 %-ով և կազմել 269.0 մլրդ դրամ:
3. Արտահանման ծավալները կազմել են 107.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա  
նույն եռամսյակի 110.8 մլրդ դրամի փոխարեն:
4. Վճարված մաքսային վճարների ցուցանիշի առումով 2014թ.-ի առաջին  
եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 39.3 մլրդ.  
դրամ:
5. Պետական բյուջե վճարված հարկերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշի  
առումով 2014թ.-ի առաջին եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից  
վճարվել է շուրջ 86.6 մլրդ դրամ: Ընդ որում, նշված կազմակերպությունների  
կողմից 2013թ.-ի առաջին եռամսյակում վճարվել է հանրապետությունում  
հավաքագրված հարկային եկամուտների 54.9 %-ը:
6. Հարկային մարմնի կողմից կատարվել են թվով 116 հարկային ստուգումներ,  
այդ թվում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի  
կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման  
ճշտության 34 ստուգումներ, որոնց արդյունքում առաջադրվել է բյուջե  
լրացուցիչ վճարման ենթակա գումարներ 393.3 մլն դրամի չափով:
7. 01.04.2014թ.-ի դրությամբ խոշոր հարկ վճարողներն ունեցել են 132.8 մլրդ  
դրամ գերավճար, այդ թվում՝ ավելացված արժեքի հարկի գծով՝ 78.1 մլրդ  
դրամ, իսկ հարկային պարտավորություն՝ 14.2 մլրդ դրամ: Նշված

Ժամանակահատվածում պետական բյուջեից հարկ վճարողների գերավճարների գումարներից ավելացված արժեքի հարկի վերադարձի ձևակերպում է կատարվել 10.5 մլրդ դրամի չափով, իսկ գերավճարների գումարներից այլ հարկատեսակների գծով հաշվանցվել է 969.3 մլն դրամի չափով կամ 9.7 %-ով պակաս նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

8. Աշխատողների միջին ցուցակային թիվը դիտարկվող ժամանակահատվածում կազմել է 155405 մարդ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավել է 4.8%-ով, իսկ մեկ աշխատողի միջին ամսական ԱՎՈՒՄ-ը կազմել է 189 հազար դրամ, նախորդ տարվա 177 հազար դրամի փոխարեն: